



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ
ՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

*Կարծիք «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության
օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի
նախագծի վերաբերյալ*

Երևան, 2018թ.



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի» նախագծով^[1] առաջարկվում է ընդլայնել խափանման միջոցների տեսակները՝ ներառելով տնային կալանքը և վարչական վերահսկողությունը, ինչպես նաև փոփոխել կալանքը՝ որպես խափանման միջոց կիրառելու պայմանները և հիմքերը: Անկախ օրենքի նախագծի ներկայացման նպատակների և ակնկալվող արդյունքների դրական երանգի՝ դրա մի շարք դրույթներ կոնցեպտուալ առումով խնդրահարույց են:

Կալանքը՝ որպես խափանման միջոց

1) Ներկայացված նախագծով առաջարկվում է կալանավորումը՝ որպես խափանման միջոց կիրառելու հիմքերը տարանջատել՝ ըստ հանցագործության ծանրության՝ ելակետ ընդունելով 5 տարուց պակաս և ավելի ժամկետով ազատազրկում նախատեսող հանցագործությունների կատարման մեջ անձին մեղադրանք առաջադրված լինելը: Ավելին, ըստ նախագծի ընդունման հիմնավորման^[2]՝ առաջարկվում է կալանավորումը՝ որպես խափանման միջոց կիրառելիս ծանր հանցագործությունների դեպքում հիմնվել *«մեղադրյալի կողմից կանխատեսվող գործողությունների կանխման»* գաղափարի վրա, իսկ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների դեպքում՝ *«մեղադրյալի կողմից արդեն իսկ կատարված գործողությունների համար»* գաղափարի վրա:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (հետայսու՝ ՄԻԵԴ) անձի ազատության իրավունքի պաշտպանության սկզբունքների մեկնաբանություններում արձանագրել է, որ կալանավորումը՝ որպես խափանման միջոց, կարող է կիրառվել անձի նկատմամբ, եթե առկա է **աղջամիտ կասկած**, որ անձը կարող էր կատարած լինել կոնկրետ հանցագործությունը, և առկա են **բավարար և վերաբերելի հիմնավորումներ**, որ անձը կարող է **դիմել փախուստի, խոչընդոտել քննությանը՝ վկաների վրա ճնշում գործադրելու, ապացույցներ կեղծելու կամ պայմանավորվածություններ ձեռք բերելու միջոցով, կատարել նոր հանցագործություն, հարուցել հասարակական անկարգություններ**:^[3] Ավելին, ըստ ՄԻԵԴ-ի՝ որոշակի ժամկետով անձի ազատության իրավունքի սահմանափակումը կարող է իրավաչափ դիտվել, երբ առկա է կալանավորվածին պաշտպանելու անհրաժեշտությունը^[4]: Դատարանը պարտավոր է ներկայացնել **բավարար և վերաբերելի** հիմնավորումներ անձի կալանավորման անհրաժեշտության մասին՝ միաժամանակ հաշվի առնելով այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորությունը, որոնք կարող են ապահովել նրա ներկայությունը դատաքննությանը:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Այս առթիվ, Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների (թվով 31)՝ կալանքի կիրառմանը վերաբերող ներպետական օրենսդրության ուսումնասիրությունն ամփոփվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Բուզադջին ընդդեմ Մոլդովայի գործով վճռում^[5]:

ՄԻԵԴ-ը փաստել է, որ կալանավորման անհրաժեշտությունը չի կարող վերացական գնահատվել^[6]: Անձի կալանավորման անհրաժեշտությունը պետք է գնահատվի **յուրաքանչյուր գործի հատուկ հանգամանքների լույսի ներքո**: Անձի շարունակական ազատագրվումը կոնկրետ գործով կարող է միայն արդարացվել, եթե առկա են հանրային պահանջի հատուկ ցուցիչներ, որոնք, չնայած անմեղության կանխավարկածի սկզբունքին, գերակայում են անձի անձնական ազատության իրավունքի հարգանքի պահանջի նկատմամբ:

Մասնավորապես, անձի թաքնվելու (փախուստի) վտանգը չի կարող հիմնվել **բացառապես անձին սպառնացող պատժի խստության վրա**: Այն պետք է գնահատվի վերաբերելի գործոնների համակցությամբ, որոնք կարող են հաստատել փախուստի վտանգի առկայությունը, որը կհիմնավորի անձի ազատագրվումը կամ նման վտանգը այնքան աննշան կդարձնի, ինչը չի կարող հիմնավորել նախնական քննության ընթացքում անձի կալանավորումը^[7]: Պետք է հաշվի առնել անձի անձնական հատկանիշները, նրա արժեքները, բնակության վայրի առկայությունը, զբաղվածությունը, ընտանեկան կապերը և բոլոր կապերը երկրի ներսում, որտեղ հետապնդվում է, ինչպես նաև անձի արտասահմանյան հարաբերությունները^[8]: Սպասվող պատժի ծանրությունը և ապացույցների կշիռը կարող են լինել վերաբերելի, սակայն որպես այդպիսին որոշիչ չեն, և երաշխիքներ ստանալու հնարավորությունը կարող է օգտագործվել՝ նվազեցնելու այդ ռիսկերը:

Անձի կողմից քննության պատշաճ իրականացմանը խոչընդոտելու վտանգը նույնպես չի կարող հիմնվել վերացական հիմնավորումների վրա, այլ պետք է ուղեկցվի **փաստացի ապացույցներով**^[9]: Հիմնավորումները, ինչպիսիք են հետագա քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը կամ այն փաստը, որ քննությունը դեռ ավարտված չէ, չեն համապատասխանում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով անձին կալանավորելու ընդունելի հիմքերին^[10]:

Մեղադրյալի կողմից հանցագործություններ կատարելու վտանգը նույնպես պետք է գնահատվի **փաստերի հիման վրա**, որոնք պետք է հավաստվեն և գնահատվեն գործի հանգամանքների լույսի ներքո՝ հաշվի առնելով հատկապես մեղադրյալի անձնական հատկանիշները և անցյալ պատմությունը^[11]:

Հաշվի առնելով որոշ հանցագործությունների ծանրությունը և դրանց նկատմամբ հանրային արձագանքը՝ հանցագործությունների որոշ տեսակներ կարող են առաջացնել հանրային անհանգստություն, ինչը կարող է բացառիկ դեպքերում արդարացնել առնվազն որոշ ժամանակով մեղադրյալի կալանավորումը: Մակայն միայն



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Բացառիկ դեպքերում և ներպետական օրենսդրությամբ որպես կալանավորման հիմք նախատեսված լինելու պայմաններում այս գործոնը կարող է հաշվի առնվել որպես Կոնվենցիայի 5-րդ հոդվածի ներքո անձի ազատագրկման հիմք^[12]: Տվյալ դեպքերում նույնպես վարույթն իրականացնող մարմինը և դատարանները

պետք է հիմնվեն առկա փաստերի, տեղեկությունների կամ ապացույցների վրա, որոնք կհիմնավորեն հանրային անկարգությունների առաջացման իրական հնարավորությունը:

Նույնը վերաբերում է նաև մեղադրյալին պաշտպանելու անհրաժեշտության հիմքին, ինչը նույնպես կարող է կիրառվել բացառապես ներպետական օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում, սակայն այն կարող է կիրառվել բացառիկ հանգամանքներում՝ կախված հանցագործության բնույթից, այն կատարելու պայմաններից և կատարման ենթատեքստից^[13]:

Այսպիսով, միջազգային սկզբունքների լույսի ներքո անձի նկատմամբ կալանավորումը՝ որպես խափանման միջոց կիրառելու համար անհրաժեշտ են բավարար և վերաբերելի հիմնավորումներ՝ այդ թվում փաստեր և փաստացի ապացույցներ՝ անձի հետագա գործողությունների կանխատեսումը հիմնավորելու համար:

Ավելին, անձի ազատության իրավունքի պաշտպանության վերոգրյալ սկզբունքները չեն տարանջատվում՝ ըստ անձին վերագրվող հանցագործության ծանրության և դրա համար նախատեսված պատժի խստության:

Սա նշանակում է, որ ***ճմեղադրյալի կողմից արդեն իսկ կատարված գործողությունների համար/*** կալանքի կիրառման գաղափարի ներմուծումը խնդրահարույց է և հակասում է անձի ազատության իրավունքի պաշտպանության սկզբունքին՝ առ այն, որ ***կալանավորումը չպետք է կիրառվի պատժիչ նպատակներով***^[14]:

Ավելին, անհասկանալի է նախագծի հեղինակների կողմից 5 տարի ժամկետով ազատագրկման ձևով պատիժը որպես ելակետ ընտրելու հիմնավորումը:

2) Նախագծով առաջարկվում է սահմանել, որ այն դեպքերում, երբ առկա է հիմնավոր կասկած, որ մեղադրյալը կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվող ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մինչև 5 տարի է, մեղադրյալի նկատմամբ կալանավորումը կարող է կիրառվել, եթե

- մեղադրյալը կարող է ***«թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, այդ թվում՝ քանի որ դեռևս հաստատապես պարզված չէ մեղադրյալի անձնավորությունը, կամ նա Հայաստանի Հանրապետության տարածքում չունի բնակության մշտական վայր»:***

Որպես տվյալ հիմքի միջազգային փորձի օրինակ, նախագծի հեղինակները նշել են օրենսդրական նմանատիպ կարգավորման առկայությունը ՌԴ-ում, Ղազախստանում, Լիտվայում, Բելառուսում: Մինչդեռ, ՄԻԵԴ-ը մի շարք վճիռներում, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնությանն ու այլ պետություններին վերաբերող^[15], հաստատել



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Է, որ միայն մշտական բնակության վայրի բացակայությունն անձի թաքնվելու վտանգի հիմք չէ և բավարար չէ անձին կալանավորելու համար՝ հատկապես հաշվի առնելով այլ խափանման միջոցների կիրառման հնարավորությունը, այդ թվում՝ նույնականացնող փաստաթղթերը վերցնելը, պրոբացիան, հսկողությունը և այլն: ***Հետևաբար, անձի մշտական բնակության վայրի բացակայությունն ինքնին չի կարող համարվել նրա ազատագրկման իրավաչափ հիմք:***

3) Նախագծով առաջարկվում է սահմանել, որ այն դեպքերում, երբ առկա է հիմնավոր կասկած, որ մեղադրյալը կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվող ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մինչև 5 տարի է, մեղադրյալի նկատմամբ կալանավորումը կարող է կիրառվել, եթե

- «մեղադրյալը վարույթն իրականացնող մարմնից թաքնվել կամ թաքնվելու փորձ է կատարել կամ խախտել է իր նկատմամբ կիրառված այլ խափանման միջոցի պայմանները,
- մեղադրյալը խոչընդոտել կամ փորձել է խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով»

Տվյալ հարցի առնչությամբ ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ հաշվի առնելով ազատության իրավունքի կարևորությունը՝ ներպետական մարմինները պարտավոր են համոզիչ կերպով հիմնավորել ազատագրկման անհրաժեշտությունը: Երբ իշխանություններն անձին զրկում են ազատությունից այն հիմնավորմամբ, որ անձը թաքնվել կամ խուսափել է ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի կողմից ծանուցվելու դեպքում, նրանք պարտավոր են ապահովել անձին պատշաճ ծանուցում և բավարար ժամանակ՝ կատարելու իշխանությունների պահանջը և ձեռք առնելու բավարար քայլեր՝ ստուգելու՝ արդյո՞ք անձն իրապես խուսափել կամ թաքնվել է իշխանություններից^[16]:

Ավելին, ինչպես արդեն վերը նշվեց, նման պայմաններում անձի նկատմամբ կալանքը չպետք է կիրառվի կատարված արարքի համար պատժիչ նպատակով, այլ պետք է հիմնվի անձի **հետագա** պատշաճ վարքագիծն ու դատաքննությանը նրա ներկայությունն ապահովելու անհրաժեշտության վրա՝ գործում առկա փաստերի լույսի ներքո:

Այլ խափանման միջոցի պայմանների խախտման հիմքով անձին կալանավորելը նույնպես չպետք է կիրառվի պատժիչ նպատակներով: Ազատագրկման հետ չկապված խափանման միջոցի պայմանների խախտման դեպքում անձին կալանավորելու հիմքերը պետք է լինեն օրենքով հստակ նախատեսված՝ ապահովելու համար



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

անձի պաշտպանությունը իրավասու մարմինների կամայականությունից, և ոչ բոլոր խախտումները պետք է հանգեցնեն անձի նկատմամբ կալանքի կիրառման հնարավորության: Ավելին, անձը պետք է հստակ և իրեն հասկանալի լեզվով գրավոր տեղեկացված լինի ազատագրվման հետ չկապված խափանման միջոցների պայմանների և դրանց խախտման դեպքում վրա հասնող հնարավոր հետևանքների մասին: Ցանկացած պայմաններում անձի նկատմամբ կալանավորման կիրառման անհրաժեշտությունը պետք է հաստատվի վերաբերելի և բավարար հիմնավորումներով և չպետք է լինի այլ խափանման միջոցի պայմանների խախտման ուղղակի հետևանք, քանի որ կալանավորումն ինքնին կարող է անհամաչափ լինել ենթադրյալ հանցագործությանը, որի կատարման մեջ մեղադրվում է անձը: Հետևաբար, իրավասու մարմինները պարտավոր են ցուցաբերել հատուկ ուշադրություն ազատագրվման հետ չկապված խափանման միջոցի խախտման հետևանքների որոշման հարցում^[17]:

4) Նախագծով առաջարկվում է մինչև առավելագույնը 5 տարի ժամկետով ազատագրվման ձևով պատիժ նախատեսող հանցագործությունների դեպքում կալանքի կիրառման հիմք նախատեսել, երբ

- «*մեղադրյալը կատարել է նոր հանցանք կամ մեղադրվում է՝ խմբի կազմում հանցանք կատարելու համար, և քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմքեր են տալիս ենթադրելու, որ ազատության մեջ մնալով մեղադրյալը կխոչընդոտի մինչդատական վարությամբ կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարության մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով*»:

Նոր հանցանք կատարելը՝ որպես կալանավորման կիրառման հիմք, ինքնին հակասում է անձի անմեղության կանխավարկածի իրավունքին, քանի որ հանցանք կատարած լինելը կարող է հաստատվել միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Ավելին, ազատության մեջ գտնվող մեղադրյալը կարող է մեղադրվել նոր, **սակայն արդեն իսկ քննվող հանցագործության հետ որևէ առնչություն չունեցող**, այդ թվում՝ անզգուշությամբ կատարված հանցագործության մեջ, որպիսի պայմաններում տվյալ քրեական գործի շրջանակներում մեղադրյալի դրսևորած վարքագծի վրա դա որևէ հետևանք կարող է չունենալ: *Տվյալ պայմաններում, նոր հանցանք կատարած լինելու կասկածի հիման վրա անձին կալանավորելու հարցը պետք է քննարկվի անձի ազատության իրավունքի պաշտպանության սկզբունքների լույսի ներքո:*

Նախագծի առնչությամբ Գլխավոր դատախազության կողմից տրված հիմնավորումներում նշվում է, որ կազմակերպված հանցավոր խմբի կազմում հանցանք կատարած անձանց նկատմամբ կալանքը՝ որպես



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

խափանման միջոց կիրառելու նշված բացառությունը պայմանավորված է հանցակցության տվյալ ձևի յուրահատկությամբ և առավել բարձր հանրային վտանգավորությամբ, ինչպես նաև ողջամիտ հիմքեր է տալիս մեղադրյալի հետագա անիրավաչափ վարքագծի բարձր հավանականության մասին:

Անկախ այն հանգամանքից, որ ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ այն դեպքում, երբ մեղադրյալը մեղադրվում է կազմակերպված հանցավոր խմբի կազմում ենթադրյալ հանցագործության համար, վտանգը, որ ազատ արձակվելու դեպքում նա կարող է ազդել վկաների կամ այլ հանցակիցների վրա, խոչընդոտել քննությանը, ինքնին հաճախ բարձր է^[18], սակայն նման վտանգը չի կարող գնահատվել վերացականորեն՝ բացառապես հանցագործության բնույթի և վտանգավորության աստիճանի հիման վրա, այլ պետք է գնահատվի կոնկրետ գործի և անձի հանգամանքների և առանձնահատկությունների լույսի ներքո:

Տնային կալանքը՝ որպես խափանման միջոց

Նախագծով առաջարկվում է նախատեսել խափանման միջոցի նոր տեսակ՝ տնային կալանքը: ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ տնային կալանքը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է *ազատագրվում՝ հաշվի առնելով դրանով ազատության իրավունքին միջամտության աստիճանն ու ինտենսիվությունը*:

ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ չնայած տնային կալանքն ավելի քիչ սահմանափակումներ, նվազ անհարմարություններ և տառապանք է առաջացնում անձի համար, քան կալանավորումը քրեակատարողական հիմնարկում, քանի որ կալանավորված անձը ստիպված է ինտեգրվել նոր և որոշ դեպքերում նաև անբարեհաճ միջավայրում, կիսել իր ռեսուրսներն ու գործունեությունը այլ խցակիցների հետ, հետևել կարգապահությանն ու իշխանությունների կողմից ենթարկվել տարբեր աստիճանի վերահսկության ողջ օրվա ընթացքում, սակայն Դատարանն արձանագրել է, որ որևէ տարբերություն չկա ազատագրված տարբեր տեսակների միջև: ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ ազատագրված աստիճանն ու ինտենսիվությունն արտահայտությունները՝ որպես Կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառման չափանիշներ, վերաբերում են բացառապես անձի ազատության իրավունքի սահմանափակմանը, այլ ոչ ազատագրված վայրերի ներքին ռեժիմի կամ հարմարավետության տարբերություններին^[19]:

Հետևաբար, ըստ ՄԻԵԴ-ի՝ անձի ազատության իրավունքի սահմանափակումների նկատմամբ նույն հիմնավորումներն են կիրառելի՝ անկախ կալանավորման պայմանների տարբերությունից և կալանավորված անձի կողմից կրած անհարմարություններից: Հակառակը, անձի ազատության սահմանափակման



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

հիմնավորումները պետք է լինեն կիրառելի և արդյունավետ՝ ի ապահովումն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի լույսի ներքո անձի ազատության իրավունքի պաշտպանության^[20]:

Նման պայմաններում, հարց է առաջանում, թե արդյոք, ըստ Նախագծի հեղինակների, տնային կալանքը կիրառելի է բոլոր տեսակի հանցագործությունների համար՝ հաշվի առնելով, որ նախագծով առաջարկվում է անվավեր ճանաչել 135-րդ հոդվածի 2-րդ մասը, և նախատեսվում է Քրեական դատավարության օրենսգիրքը լրացնել 137-րդ հոդվածի 1.1 և 137 հոդվածի 1.2-րդ կետերով, որոնք վերաբերելի չեն տնային կալանքի կիրառմանը: Միաժամանակ, նույն նախագծով սահմանվում է, որ տնային կալանքի մեկ օրը հավասար է կալանքի մեկ օրվան: Հետևաբար, անհրաժեշտ է հստակեցնել տնային կալանքի կիրառման պայմանները՝ ապահովելով անձի ազատության իրավունքի պաշտպանության վերը քննարկված չափանիշները:

Նախագծով սահմանվում է, որ Դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև ունենալ հեռախոսային հաղորդակցություն, ուղարկել և ստանալ նամակագրություն, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներ, օգտվել կապի այլ միջոցներից, շփում ունենալ որոշակի անձանց հետ կամ իր բնակության վայրում հյուրընկալել այլ անձանց: Տնային կալանքի ենթարկված անձի անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի նկատմամբ միջամտության անհրաժեշտությունը պետք է պատշաճ հիմնավորված լինի դատարանի համապատասխան որոշմամբ՝ հետապնդվող նպատակին համաչափ: Հաշվի առնելով նամակագրություն վարելու՝ կալանավորված անձանց իրավունքը՝ առանց դրա թվի սահմանափակման^[21]՝ տնային կալանքի ենթարկված անձը նույնպես պետք է օգտվի նման իրավունքից, ինչը կարող է ապահովվել համապատասխան իրավասու մարմնի միջոցով: Միաժամանակ, հաշվի առնելով տնային կալանքի շրջանակներում մեղադրյալի ազատության իրավունքին միջամտության աստիճանն ու ինտենսիվությունը՝ անհրաժեշտ է սահմանել դատարանի իրավասությունը՝ կիրառելու տնային կալանքը նաև որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց՝ հաշվի առնելով անձի համաձայնությունը, գործի հանգամանքները և առաձնահատկությունները:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի կողմից առաջարկվում է.

1. Բացառել կալանավորումը՝ որպես խափանման միջոց կիրառելու պատժիչ նպատակները՝ ի ապահովումն մեղադրյալի ազատության իրավունքի պաշտպանության: Կալանավորումը՝ որպես խափանման միջոց, կարող է կիրառվել հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի նկատմամբ՝ բացառապես անձի պատշաճ վարքագիծն ու դատավարության ընթացքում նրա ներկայությունն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ բավարար և վերաբերելի հիմնավորումների հիման վրա:
2. Հստակեցնել տնային կալանքը՝ որպես խափանման միջոց կիրառելու հիմքերը և պայմանները՝ ապահովելով անձի ազատության իրավունքի պաշտպանության չափանիշները:
3. Նախագծով սահմանել տնային կալանքը՝ որպես կալանավորման այլընտրանքային միջոց կիրառելու հնարավորությունը:
4. Սահմանել տնային կալանքի ենթարկված անձի անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի պաշտպանության երաշխիքներ:
5. Նախատեսել տնային կալանքի ենթարկված անձի նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներ ուղարկելու և ստանալու իրավունքը՝ իրավասու մարմնի միջոցով:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

[1]<http://www.prosecutor.am/myfiles/files/pdf/%D5%95%D6%80%D5%A5%D5%B6%D6%84%D5%AB-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%AB%D5%AE.pdf>

[2]<http://www.prosecutor.am/myfiles/files/pdf/%D5%80%D5%AB%D5%B4%D5%B6%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%B4-1.pdf>

[3] Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի (Piruzyan v. Armenia), no. 33376/07, 26 հունիսի 2012թ., § 94:

[4] Բուզադջին ընդդեմ Մոլդովիայի (Buzadji v. the Republic of Moldova), no. 23755/07, § 88, Տոմազին ընդդեմ Ֆրանսիայի (Tomasi v. France) 12850/87, 27 օգոստոսի 1992, § 95, Թոհն ընդդեմ Ավստրիայի (Toth v. Austria) 11894/85, 12 դեկտեմբերի 1991, § 70, Ի. Ա. ընդդեմ Ֆրանսիայի, 28213/95, 23 սեպտեմբերի 1998, § 108:

[5] Բուզադջին ընդդեմ Մոլդովիայի (Buzadji v. the Republic of Moldova), no. 23755/07, § 52-60:

[6] Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի (Piruzyan v. Armenia) 33376/07, 26 հունիսի 2012, § 92:

[7] Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի, § 95; Պանչենկոն ընդդեմ Ռուսաստանի (Panchenko v. Russia), no. 45100/98, 08 փետրվարի 2005, § 106:

[8] Նեումեիստերն ընդդեմ Ավստրիայի (Neumeister v. Austria), 27 հունիսի 1968, § 10:

[9] Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի, § 96:

[10] Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի, § 98:

[11] Գալն ընդդեմ Հունգարիայի (Gal v. Hungary), no. 62631/11, 11 մարտի 2014թ. § 42:

[12] Լետելիերն ընդդեմ Ֆրանսիայի (Letellier v. France), no. 12369/86, 26 հունիսի 1991, § 51:

[13] Ի. Ա. ընդդեմ Ֆրանսիայի (I. A. v. France), no. 28213/95, 23 սեպտեմբերի 1998, § 108:

[14] Recommendation Re(2006)13 of the Committee of Ministers to member states on the use of remand in custody, the conditions in which it takes place and provision of safeguards against abuse, point 3.

[15] Ալեքսանդր Մակարովն ընդդեմ Ռուսաստանի (Aleksandr Makarov v. Russia), no.15217/07, 12 մարտի 2009թ. § 128; Պշևեչերսկին ընդդեմ Ռուսաստանի (Pshevecherskiy v. Russia), no. 28957/02, 24 մայիսի 2007թ., § 68, Իգնատենկին ընդդեմ Մոլդովայի (Ignatenco v. Moldova), no. 36988/07, 08 Փետրվարի 2011թ., § 83:

[16] Վասիլիսիուսն ընդդեմ Մոլդովայի (Vasiliciuc v. the Republic of Moldova), no. 15944/11, 02 May 2017, § 39-40:

[17] Ազատագրված հետ չկապված միջոցների նվազագույն չափանիշները, Տոկիոյի կանոններ, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի թիվ 45/110 բանաձև, 14 կեկտեմբերի 1990թ, կետ 14.5; Ազատագրված հետ չկապված միջոցների նվազագույն չափանիշների մեկնաբանություն, էջ 28, <https://www.ncjrs.gov/pdffiles1/Digitization/147416NCJRS.pdf>

[18] Պոդեսկին ընդդեմ Սան Մարինոյի (Podeschi v. San Marino), no. 66357/14, § 149:

[19] Բուզադջին ընդդեմ Մոլդովիայի (Buzadji v. the Republic of Moldova), no. 23755/07, § 112-113:

[20] Նույն տեղում, §114:

[21] Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենքը, հոդված 17: